9. Էջ 211, տող 10—13. Զի մարմինն եւ նոցա ի չորից հիւթոցն կայ, եւ ոգին ոչ ի չորիցն հիւթոց յօդելոց, այլ ի պարզական եւ ի սուզական բնութենէ: Տպագրին մէջ ունինք սուզական, որ ըստ Հայկ. Բառ. կը նշանակէ 1. անդնդային. — Իշխանութիւն չարին սուզական. Զօր խանդացեալ չարին սուզական գնձ: 2. Հարաւային բեւեռի. — Կէտքն են այսոքիկ. կէտ երկնամիջակ, կէտ ժամագիտակ, կէտ եթերական, կէտ սուզական (Տոմար): Ի սուզականն եւ ի ժամագիտակն միշտ հողովել (արեգական), Ասող. վերջաբ:: Ի հարաւայինն խոնարհի ի սուզականն: Ընդ ձմեռնային շաւզօք յաներեւակն եւ ի սուզականն կոյս. Խոր. աշխն:: Բայց այս երկու իմաստներն եւս անյարմար են տեղին: Մեր ձեռագիրն ունի սուզական, որ ուրիշ տեղ գործածուած չլինելով՝ բացատրութիւնը պարզ չէ. բայց կրնայ տեսակ մը հոմանիշ կազմել պարզական բառին, կազմուած սուլար արմատէն. երկուքն ալ տեսակ մը բնալուծական կամ աւելի ճիշդ բնազանցական բալուծական համար էաւ տարրը որակելու համար: Հետոքիր ցուցիչ տարրը որակելու համար:

է նկատել որ Հայկ. Բառարանն ալ ունի նոյն սուղական բառը, որուն դիմաց իր վկայութիւն բերած է միայն Եղնկայ յիշեալ հատուածը. ասկէ կրնանք հետեւցնել ինչ որ վերը ըսինք, այն որ եթէ յիշեալ ընթերցուածը տպագրական սխալ մը չէ, յետին հրատարակչաց անձահ եւ քմահաճ մէկ սրբագրութիւնն է:

10. Էջ 226, տող 18—23. Որոյ Հայշոյութիւնն ի բունն իսկ գնայ, ըստ նորա ամպարշութեանն, որպէս թէ զկէսն յիւր յինքեան ունիցի, եւ զկէսն իւր ի սողունսն եւ ի ճճիս տանջիցէ: Զկէսն իւր, ինչպէս երկրորդ անգամ կրնուած ձեւէն կ'երեւայ, պէտք է ուղղել զկէսն իւր. Ճեռագիրն ունի հոս “իւր յընքեան”, ուստի պէտք է կարծել թէ յիւր տպագրական սխալունք մըն է, պատճառուած յաջորդ բառին յ նախդիրէն:

11. Էջ 245, տող 5—10 կը կարդանք տպագրին մէջ. “Ադամ, ես եմ Աստուած եւ չեք այլ ոք եւ բայց յինէն այլ Աստուած քեզ մի լիցի. ապա թէ ունիցիս զոք այլ աստուածս բայց յինէն, գիտասջիր զի մահու մեռանիցիս”: Թէ ինչքան անցարմար ինկած է հոս “զօք այլ աստուածս”, պէտք չկայ մեկնելու. բայց ամէն բան կը պարզուի, եթէ խօսքը ուղղենք ըստ ձեռագրին գնելով առ փոխանակ այլ, “եթէ ունիցիս զօք առ աստուածս”: Սըն ուղղութիւնը նմանապէս պատահական տպագրական սխալ մը կը թուի:

Ե.

ՁԵՌԱԴՐԱԿԱՆ ՄՐԲԲԳԲՈՒԹԻՒՆՆԵՐ ԵԶՆԿԵՑ ՄԵՋ

Թէեւ Եղնկայ ձեռագիրը գրուած է վերին աստիճանի զգուշաւոր ձեռքով եւ յատուկ ինսամքով, բայց, ինչպէս նախորդ ձեռագրական համեմատութիւնները ցոյց տուին, հոս ալ կան այնպիսի պատահական սխալներ, որոնցմէ ոչ մէկ մարդկային ձեռք կրնայ բոլորովին զերծ մնալ: Այս սխալները առ հասարակ ուղղագրական են. բայց Եղնկայ բնագրին մէջ մուծ են նաեւ այնպիսի սխալներ, որոնք անկարելի է որ Եղնկայ պէս փառաւոր գրչի մը տակ մուտ գործէին: Ասոնք ոչ այլ ինչ են եթէ ոչ ութը հարիւր տարիներու ընթացքին մէջ (Ե—ԺԿ Դար) յաջորդական բազմաթիւ արտագրութեանց ժամանակ նախորդ պարզ ուղղագրական սխալէ մը հետզետէ ձեւափոխելով յառաջ եկած սխալներ: Բանասիրութեան պարագն է ողքան կարելի է երեւան հանել այդ սխալները, եւ իրենց նախկին ձեւին վերածելով զանոնք, բնագրիներու հին վիճակը վերականգնելու: Այս նպատակով է որ կ'ուզեմ յաջորդ տողերով շեշտել հետեւեալ անհարթութիւնները, անոնց քով տալով նաեւ իմ յարագագոյն կարծած սրբագրութիւններս:

Հոս պարագ կը համարիմ վերստին կրկնել թէ ի ձեռին չունենալով նորայրի Քննասէրը, առիթ չեմ ունեցած ստուգելու թէ արդեք յիշեալ սրբագրութիւնները նկատուած են նաեւ

նոյն աշխատութեան մէջ։ Այս թերին լրացը-  
նել կը թողում յարգելի ընթերցողներուս։

Էջ 17, տող 18. որ զչորս կագեցողն  
ընդ միմեանս ի հաշտութեան եւ ի հաւանու-  
թեան պահեալ նուանէր։ Եզնկայ այս հա-  
տուածին մէջ՝ ուր աշխարհը կը նմանցուի քա-  
ռաձի կառքի մը, սկիզբէն մինչեւ վերջ ամէն  
բան դրուած է ներկայ։ ինչ զաշխարհս տեսա-  
նեմք, Ծին, օձտեն, ընթանան, վարդին եւն։  
Ուշադիր ընթերցողը յանկարծ պիտի կանգ  
առնէ նուանէր անկատարին առջեւ, որ տեղին  
սոլորովին անյարմար է եւ ուղղելի նուանէ։

Էջ 17, տող 21. Ամենայն կառք ի հա-  
մազգեաց երիվարաց Ծին, բայց միայն այսց  
կառաց՝ որ ի չհամազգեաց Ծեալ են։ Բայց  
կամ բաց “բաց ի, նշանակութեամբ ոչ թէ  
սեռ.-տր., այլ բացառական կը պահանջէ.  
ուստի վերի հատուածին մէջ ստորագծեալ  
բառերը ուղղել պէտք է յայսց կառաց։”

Էջ 32, տող 15—21. Զի եթէ պարզ  
բնութիւն էր հիւղն, եւ մենակերպ, եւ աշխարհս  
ի յօդուածոց եւ ի պէսպէս բնութեանց եւ ի  
խառնուածոց հաստատեալ է, անհնարին է  
ասել՝ եթէ հիւղեայն լեալ իցէ։ — Հոս եր-  
կու սխալ կայ։ Եզնիկ կը փաստաբանէ որ եթէ  
հիւլէն պարզ մարմին է, աշխարհս որ բաղա-  
դրեալ մարմին է, չի կընարհիւլէն առաջ եկած  
ըլլալ։ Առաջին սխալն այն է որ “յօդուածոց”,  
ածականը շփոթուած է “յօդուած”, գ Սականին  
հետ եւ փոխանակ դնելու “ի յօդուածոց”,

գրուած է “ի յօդուածոց . . Եզնկայ քիմիական  
բառերն են “պարզ բնութիւն”, եւ “յօդուա-  
ծոյ կամ յօդուածով բնութիւն”, որ կը հա-  
մապատասխանեն մեր այժմեան պարզ եւ բա-  
ղադրեալ մարմին ասութիւններուն։ ինչպէս կը  
տեսնուի նոյն էջ քիչ մը վարը քանի մը ան-  
գամ գործածուած։ “չէ մարթ յօդուածոյիցն  
ի միոցէ պարզ բնութենէ ունել զհաստատու-  
թիւնն, քանզի յօդուածոյըն ի պարզական  
բնութեանցն յօդի . . . զի եթէ յօդուածով  
էր հիւղն, եւ յօդուածոյըն ի պարզականացն  
ունին զանձնաւորութիւն եւն”։ Եզնիկ ըսել  
չուզեր թէ աշխարհս “յօդուածներէ, բաղկա-  
ցած է, այլ թէ նա բաղադրեալ մարմին է։ —  
Երկրորդ սխալն այն է որ հիւղեայն տրական  
ձեւը միտք չունի եւ պէտք է ուղղել բաց-  
առական “ի հիւղեայն։” ինչպէս որ քիչ  
մը վարն ալ ունինք նոյնպէս բացառականով՝  
“վասն զի չէ մարթ յօդուածոյիցն ի միոցէ  
պարզ բնութենէ ունել զհաստատութիւնն,  
քանզի յօդուածքն ի պարզական բնութեանցն  
յօդին։”

Էջ 39, տող 8—11. Եւ այսպէս կազ-  
մածոյ իրաց ինչ եւս՝ միտք գործողին գործեն  
զշարն, որպէս եւ երկաթ մերթ ի բարիս պաշ-  
տի, եւ մերթ ի չար։ Նախորդ էջերուն մէջ  
Եզնիկ կը հաստատէր թէ ամէն բանէ կարելի է  
թէ չար առաջ բերել եւ թէ բարի։ Հոս ալ  
կ'ուզէ ցուցնել թէ գործաւորին միտքը կրնայ  
նոյնպէս գործիք շինելու յատուկ նիւթերէն

թէ չար եւ թէ բարի բան շնորհ. այս միտքը  
տալու համար՝ պարզ է որ վերի բառը ուղղե-  
լու է «ի կազմածոյ իրաց»։ իսկ այնպէս ինչ-  
պէս կայ՝ իմաստ չունի:

Էջ 41, տող 11—15. Զի եթէ իբրեւ  
զմի ինչ յայլօցն բնութեանց լեալ էր՝ զոր ի  
հարկէն ծառայեն Աստուծոյ, ապա եւ վարձան  
ընդ կամակարութեանն առնլց չէր արժանի:  
Խօսքին իմաստը կը պահանջէ զոր ուղղել “որ”,  
իբրեւ ~~յաբաբերական~~ գերանոն ենթակայ ծա-  
ռայեն բային, որ իբրեւ չէզգք բայ չէր կրնար  
արդէն սեռի ինդիր ունենալ:

Էջ 58, տող 3—8. իսկ եթէ ոք յոշինչ  
զԱստուծոյ զպատուիրանն համարիցի, յորժամ  
մրցել ընդ բանսարկուին մարտնչիցի՝ վաղ-  
վաղակի կործանի, քանզի չունի գնշանակս յաղ-  
թութեանն։ Այս հատուածին դէմ եզնկայ  
ձեռագիրն ունի «մարտ չիցի», ընթերցուածը  
(այսպէս բաց բաց, փոխանակ մարտնչիցի),  
որմէ կ'երեւայ թէ «մարտնչիցի», ձեւը հրա-  
տարակիչներու ենթադրութեամբ է ձեւացած.  
բայց այս ենթադրութիւնը՝ որչափ ալ որ ար-  
դարանայ ձեռագրին երկու բառերուն մէջտեղը  
գտնուած միջօցովը, այնու ամենայնիւ սխալ է,  
որովհետեւ երկրորդ նախադասութեան իմաստը  
կը դառնայ անկապ: Կանոնաւոր նախադասու-  
թեան վերածելու համար պէտք էր կամ «մարտ  
չիցի», բառը վերածել «մաստչիցի», եւ կամ  
եթէ այդ ձեւը ընդունեցինք «մարտնչիցի»,  
«մրցել», բառն ալ դարձնել «մրցեալ». վեր-

ღწნა կարող էր եւ տառին վրայ պատիւ մը ու-  
նենալ եւ յետոյ այդ պատիւը յապաւուիլ, ինչ  
որ շատ սովորական երեւցիթ է ձեռագրաց մէջ:  
Բայց յայտնի է որ սխալ մը մէկ տառափոխու-  
թեամբ ուղղելն աւելի հաւանական եւ ընդու-  
նելի է, քան երկու տառափոխութեամբ. ուստի  
վերցիշեալ ձեւին մէջ ալ ուղղելի բառն է  
“մատչցիցին”:

Էջ 66, տող 8—9. Եւ զմիսն եթէ  
սիրտ ուրուք առնոյր եւ ուտէր՝ ոչ վնասէր.  
Նոյն էջ՝ տող 22—26 եւ էջ 67, տող 1—4.  
զմանըագորն եթէ ոք լոկ ուտիցէ՝ սատակիչ  
է, եւ խառնեալ ընդ այլ արմատն քնածու  
լինի քնահատաց։ Եւ զիազար՝ եթէ ի տօթ  
ժամանակի ուտիցէ ոք, քանզի զովացուցիչ է,  
զտապս ի փորոշն փարատէ. եւ եթէ ի հով  
ժամանակի ուտիցէ ոք, վնասէ։ Նշնպէս էջ 88,  
տող 4—9. Նա եւ զպաշտոնեայն իսկ  
իւրեանց՝ եթէ ոչ Աստուծոյ սաստ պահէր,  
ազգի ազգի խեղութեամբք խեղէին եւ անհնա-  
րին մահուամբք սպանանէին։ Յիշեալ խօսք-  
րուն մէջ ըստ ընական եւ տրամաբանական  
բացարութեան՝ պէտք էր որ զմիսն, զման-  
րագորն, զիազար, զպաշտոնեայն ուղղա-  
կան դրուէին իբրեւ ենթակայ ոչ վնասէր —  
սատակիչ է, քնածու լինի — փարատէ, վնասէ —  
խեղէին, սպանանէին, բայերուն։ Քիչ մը  
անփոյթ գրողներ կրնային այդ բառերը իբրեւ  
սեռի խնդիր մտածելով՝ “առնոյր, ուտէր — ու-  
տիցէ, խառնեալ — ուտիցէ — պահէր, բայե-

բուն, դնել հայցական. Եւ այս շատ սովորական է մեր մանաւանդ յետին գրողներուն մէջ: Եղնիկ այլուր այս տեսակ բան չունի. ուստի կրնայինք այս տեղն ալ ձեռագրական սխալ համարել, բայց այս սրբագրութիւնը մեր ձեռքով ընել չյանդգնելով, կը թողունք ընթերցողին դատողութեան:

Էջ 68, տող 23—26. Եւ առաջնոյ շմասակարութեան գաղանացն մարդոյ՝ այժմու համբոյիս եւ ընտելրութիւնս վկայեն: Եթէ “համբոյրս եւ ընտելրութիւնս, ձեւերը համարէինք յօքնակի անորոշ հայցական, կ'ունենայինք ամենակոշ սխալ մը՝ փոխանակ համբոյը բութելութիւնք ըսելու. բայց պարզ է որ այսպիսի սխալմոնք մը կասկածելու տեղի չկայ. ասոնց մէջ և վերջաւորութիւնը համարելու է առաջին դէմքի դիմորոշ յօդ, իսկ վկայեն բայց դրուած է յօքնակի՝ բաղադրեալ ենթակային պատճառաւ:

Էջ 84, տող 2—5. Եւ ոչ եթէ ի դատապարտութիւն ինչ ոգոց լինի մարդոյն տանջանքն դիւաց, այլ առաւել եւս յարդահատութիւն: Տանջանքն ենթակային դէմ լինին յափնակի բայս աւելի կանոնաւոր է:

Էջ 88, տող 4—8 տես վերը, Էջ 66 դիտողութեան մէջ:

Էջ 121, տող 22—24 զի ոչ յԱստուծոյ կարգեցան, այլ ի մարդկանէ հնարողութենէ: Տարօրինակ է յատկացուցչին համաձայնութիւնը իւր յատկացեալին հետ. շփո-

թութեան պատճառ եղած է անշուշտ ի նախդիրը, որ յաջորդ բառը բացառականի է վերածած անհմուտ գրիներու տակ: Անհաւանական է ենթադրել որ բառն ըլլար փոխանակ “ի մարդկականէ հնարողութենէ, (նախադաս համաձայնեալ ածական): Ուզզելի է “ի մարդկան,”:

Էջ 124, տող 9—12. Դարձեալ որ զայն գիտաց՝ եթէ երկու որդիք են յորովայնի անդ, զայն ընդէր ոչ ծփնեաւ՝ թէ մինն բարի եւ միւսն չար: Ուզզելի “մինն բարի է եւ միւսն չար.” է ձայնաւորը մոռցուած է շփութուելով յաջորդ եւ-ին առաջին տառէն:

Էջ 124, տող 22—24. ոչ եղծ զարն, այլ եւ թագաւորութիւնն եւս ետ նմա ինն այլ եւ թագաւորութիւնն հոս ունի “թագաւորականի: Զեռագիրն հոս ունի “թագաւորութիւն.” եթէ այս բառը կարդանք թագաւորութիւնն, ինչպէս տպագիրն ունի, կը ծագի լեզուական անյարմարութիւն եւ պէտք կըլլայ դարձնել զթագաւորութիւնն, ինչպէս է յաջորդ երեսը, Էջ 125, տող 22—25. “Դարձեալ զի զթագաւորութիւնն որդւոն ետ, միւմ լինն հազարամեան, եւ միւսումն զանսպառազինն հազարամեան, այսպիս կարգելի է նաեւ բառը կարգանք դալ “թագաւորութիւնն, որով սխալնք գգուշանալ, ինչո՞ւ այսպէս չգնել:

Էջ 132, տող 20—25. զորոց զբարւոյն կողմն յԱրմզդէ դնեն, զարչառաց եւ զոշւարիէ եւ զայլը պիտանացուաց. եւ զարին կողմն յԱրհմայն, զգայլը եւ զգազանաց եւ զՃճեաց վեսակարաց: Իմաստը բաւական ցոյց կու տայ վեսակարաց:

թէ զոչխարէ պէտք է ուղղել “զոչխարաց”, համաձայն իւր վեց ընկերակիցներուն. հատուածը կը թարգմանուի. “բարիներուն կողմը որմիզդէն կը համարին, ինչ. արջառներու, ոչխարներու եւ ուրիշ պիտանի անասուններու. իսկ չարերուն կողմը Արհմէն, ինչ. գորտերու, գազաններու եւ վեսակար ճճիներու;”

Էջ 135, տող 2. թշնամութիւնն ուղղել “թշնամութիւն”, ձեռագիրն ունի թշնամութիւն, որ կրնայ երկու ձեւով ալ կարդացուիլ:

Էջ 149, տող 1—3. եւ այլն եւս ինչ մի ջուրս է, եւ զմեր պէտս ոչ հարկանիցէ, բայց միայն զի զկծեցուցանիցէ: Ասոնցմէ նախորդ տողերով Եղնիկ կը ցուցնէ թէ լուն եւ մուկը թէ եւ չնչին բաներ են, բայց մենք չենք կրնար ջնջել աշխարհէն. — Հիմայ կը շարունակէ. — Նաեւ ջուրին մէջ ալ ուրիշ բան մը կայ (տեսակ մը փոքրիկ անասուն), որ մեզ պէտքի չէ, այլ միայն կը կծէ եւն: Այս բացատրութեան համեմատ այլն պէտք է դարձնել “այլն”: (Իսկ այլն եւս կը նշանակէ “միւսները, մնացեալը”, որ բնաւ չէ յարմար):

Էջ 154, տող 6—14. վասն որդեծնութեան եւ մարդկան յաշխարհի սերելոյ, ներեաց նմա ինն հարիւր եւ երեսուն ամ... եւ վասն արտասուացն եղեկիայի արքայի՝ յաւելաւ նմա 15 ամ: Եւ վասն ապաշխարութեան նինուէացւոցն՝ ոչ կորօյ զբաղաքն...: Հոս ու-

սինք երեք համադիր նախագասութիւններ, բայց ասոնցմէ երկրորդը ժամադրութիւնը կը խախտէ, զոր վերահաստատելու համար պէտք է յաւելաւ ձեւը փոխել եւ դարձնել “յաւել”:

Էջ 159, տող 2—6. Այլ երկնք եւ երկիր անօթք ետեղակալք են հաստատեալք յարաջէն, ունել ամփոփ ընդ ինքեամբ զամենայն՝ որ ի միջն նոցա է: Ընդ ինքեամբ եղակին պէտք է ուղղել “ընդ ինքեամբք”, յոքնակիով, ինչպէս է քիչ մը վարը. “Եւ են հարկաւոր բնակաւոք, հրամանաւ արարչն իւրեանց, ի վայելս ամենայն կենդանեաց. եւ իւրեանց ինքեանը չեն...”

Էջ 171, տող 25. Կամի՞ զի եւ իւր բանաւոր արարածքն ցանկացողք բարեաց եւ զործօնեայ արդարութեան լինիցին: Եթէ առաջն ստորոգելին (ցանկացողք) յօքնակի է դրուած, գեղեցկութիւնը կամ համաշափութիւնը կը պահնջէ որ երկրորդն ալ դրուի յօքնակի, այն է “զործօնեայք”:

Էջ 176, տող 20—23. Եւ յօրանշելն եւ ձգտել, որպէս կարծեցին ոմանք, ոչ ի դիւէ լինի, այլ ի մեղկութենէ եւ թուլութենէ մարմնոցն: Երկրորդ բացառականին վայէն ի նախորին յապաւումը բոլորովին պատահական է. ուղղելք է “ի մեղկութենէ”:

Էջ 178, տող 15. Եւ մի՛ իմն ի հակառակորդէն, քանզի նա անմարմին է...: Եղնիկ քանի մը տող վերը (նոյն էջ, տող 5) կըսէ թէ երազները երկու պատճառ ունին “Եւ այնր թէ երազները երկու պատճառ ունին”:

Երկու պատճառք են . ասոնցմէ մին այն է՝ որ  
Աստուածային շնորհաց ազգեցութեամբ մարդ  
երազ կամ տեսիլք մը կը տեսնէ (տող 7—14).  
բայց երկրորդը որն է արդեօք. այս մասին Եղ-  
նայ մէջ բան մը չկայ: Բայց իրօք տող 15-էն  
սկսեալ մինչեւ յաջորդ երեսին վերջը կը պատ-  
մուի սատանայական երազներու (երազափոր-  
ձութեան կամ երազախաբութեան) մասին, որ  
ուրիշ բան պիտի չըլսյ, բայց եթէ Եղնայ  
տուած պատճառներէն երկրորդը. այսպէս  
ըմբռնելու եւ այսպէս մեկնելու համար պէտք է  
վերսիշեալ տողին մէջ մի իմն ձեւը, որ հա-  
կառակ է տակը մէջ բերուած մանրամասն բա-  
ցատրութեանց, ուղղել եւ դարձնել միւսն:   
Երկու ձեւերուն շփոթութիւնը շատ հասարակ  
կերպով կը մեկնուի երկաթագիր գրութեամբ, ուր  
ՄԻՒՄՆ եւ ՄԻՒՄՆ հազիւ թէ կը զանազանին:

Էջ 202, տող 1—5. Եւ զի՞նչ զար-  
մանք են ընդ նոցա՝ թէ զերկինս վասն անչափ  
մեծութեանն, եւ զլուսաւորս վասն առաւել  
պայծառութեանն աստուածս կարծէին: Զար-  
մանալ բայը կը պահանջէ ընդ-ով հայցական.  
ուստի ուղղելի ընդ նոսսա. հատուածը կը  
թարգմանուի “ինչո՞ւ զարմանալ անմնց վրայ՝  
որ երկինքը անչափ մեծութեան պատճառաւ,  
եւ լուսաւորները՝ աւելի պայծառութեան հա-  
մար, աստուած կը կարծէին:”

Էջ 217, տող 12—22. Եւ չէ հնար  
լուսնի յերկիր իջանել. որպէս կախարդաց տե-  
սեալի ժամանակի հրամանաւ Աստուծոյ զլուս-

նցն արիւնագոյն լինելոյ զկերպարանսն՝ դիւի  
նմանել լուսնի բարբանջեն, թէ զլուսին իջու-  
ցանիցեն. որում չեն մարթ լինել, թէ որ քան  
զբազում աշխարհս մեծ է՝ թէ ի կալ մի փո-  
քրիկ ամփոփիցի, եւ կթիցի անստինն: Սխալագիր  
բառն է չեն մարթ, զօր պէտք է ուղղել “չեն  
մարթ”: Որովհետեւ ձեռագրին մէջ եւ է  
նոյն ձեւով են միշտ, ուստի այս պարագային  
ձեռագիրը մեր ուղղութեան հակառակ չէ.  
Խօսքին իմաստն է որ ուղիղ ձեւը պիտի որոշէ:  
Եղնիկ կ'ըսէ. “կախարդները կը բարբանջեն թէ  
լուսինը կրնան իջեցնել վար. չեն կրնար լինել այն-  
պիսի բան, թէ նա որ բազում երկիրներէ աւելի  
մեծ է, փոքրիկ կալի մը մէջ ամփոփուի...”  
ևյս պարզ իմաստը կը հանուի միայն չեն  
մարթ ձեւէն. իսկ եթէ առնենք չեն մարթ,  
թերեւս կախարդներուն անցնի խօսքը, բայց այս  
պարագային լինել բային տեղ կը պահանջուի  
առնել, իսկ որում ըսելու տեղ ալ՝ զոր.  
“անոնք չեն կրնար ընել այնպիսի բան որ...”

Էջ 221, տող 20—22. Բայց զի փո-  
փոխմունսն ոգւոց ի մարմոց ի մարմինս ետ,  
այնու յցյդ եպերելի է: “Ետ” հոս կը նշանակէ  
ենթագրեց, որուն հոմանիշ է նաեւ “դնել”.  
բայց պէտք չէ կարծել թէ ըստ այսմ բառը  
պէտք է ուղղել եղ, որովհետեւ “տալ” նցն  
նշանակութեամբ գործածուած կայ քիչ մը  
վերը, տող 4. Եւ որպէս պատճառ ամենայնի ի  
միոջէ միութենէ տույ եւ զինամակալութիւնն  
ի նմանէ դնէր...”

Էջ 222, տող 7—12. Եւ զմիսն չու-  
տել՝ եթէ վասն զկարիս մարմնոցն խափանելոյ  
հրամայէր, բարւոք եւ յիրաւի առնէր. ապա  
եթէ իբր ի պղծոյ իմեքէ արարածոց հրա-  
մայէր հրաժարել, վատթարագոյն: Թէ ի պղծոյ  
եւ թէ իմեքէ եղակի բացառականները բաւա-  
կան են ցուցնելու թէ գոյականն ալ պէտք է  
ուղղուի “արարածոյ”։ Շփոթութիւնը ծագած է  
երկաթագիր Յ եւ 8 տառերուն նմանութենէն։

Էջ 230, տող 20—22. ...յամենայն  
դարս աստուածապաշտք գտանէին, որք յան-  
դիմանէին զիշշմակապատուն. Ուղիղ է ու-  
րիշներու կողմէ առաջարկուած “հիշմակա-  
պաշտո”, ձեւը, որ կը նշանակէ բուն “աստա-  
նայապաշտ”, եւ է իբր հակառակը՝ քիչ մը  
վերը դրուած “աստուածապաշտ”, ձեւին։

Էջ 233, տող 16—18. Է իմ զօրու-  
թիւն. որ արար եւ ետ զնոսա ընդ ձեռամբ  
նորա: Պէտք չէ կարծել թէ ուղղելի է “եղ  
զնոսա”. այսինքն “կայ զօրութիւն մը՝ որ  
ստեղծեց զանոնք եւ դրաւ անոր ձեռքին (իշ-  
խանութեան) տակ”, սովորական են դնել ընդ  
ձեռամբ կամ տալ ի ձեռս ոճերը, բայց տալ  
ընդ ձեռամբ եւս կայ քիչ անգամ, ինչ. Զորս  
ընդ ձեռամբ ձերով ետու. Ա. Գ.։

Էջ 233, տող 25 — Էջ 234, տող 6.  
Եւ եթէ բժիշկ ըստ պէսպէս հիւանդութեանց  
ազգի ազգի գեղս ախտացելցն մատուցանել,  
զի որ սկզբան ցաւոյն գեպ իցէ՝ զայն ի սկզբան  
մատուցանեն, եւ որ յընդմիջելն՝ զայն ի

միջոցի, եւ որ ի պառաւել ցաւոյն՝ զայն հուսկ  
յետոյ: Թէ առաջին մատուցանել անորոշ եւ  
թէ երկրորդ մատուցանեն յոքնակին պէտք է  
դարձնել “մատուցանէ”, և խօսքին ենթական է  
“բժիշկ”։

Էջ 234, տող 14—18. Իբրեւ կանխա-  
գէտ գիտէ գամենայն, մինչ չեւ ինչ լեալ իցէ,  
թէ որպէս պարտ իցէ առնել, եւ յոր ժամա-  
նակի, եւ յոր պէտս: Ըստ օրինի պէտք է ըլլայ  
“յորում” ժամանակին։

Էջ 245, տող 14—18. Եւ եկեալ հիւ-  
ղեայն՝ պատուիրել նմա ըստ սովորութեանն,  
տեսանէր՝ զի ոչ անսայր նմա Ադամ, այլ իոր-  
հեալ ի բաց մերժէր, եւ չմերձենայր առ նա:  
Պէտք է ուղղել “խորշեալ ի բաց մերժէր  
եւն...”, և եւ Շտառերուն շփոթութիւնը անց-  
ման երկաթագրին պատճառաւ է, ուր երկուքն  
ալ շատ նման են ձեւով։

Էջ 263, տող 19—21. ոչ զի ես միայն  
արժանի եղայ խորհրդոյն, որ տրուաս եմ առա-  
քելոց...: Ստորագծեալ ձեւին տեղ ձեռագիրն  
ունի եղայ, որ նյոն է: Եղանիմ բային դէմ  
անշուշտ շատ կանոնաւոր կը լինէր եղայ ձեւը,  
ինչպէս հատանիմ — կատ. հատայ, բայց այլուր  
չկայ գործածուած: Տարակոյսի մէջ ենք թէ  
չկայ գործածուած: Տարակոյսի մէջ ենք թէ  
մնացորդ մըն է, ինչպէս ապաստամբ բառը, թէ  
աշխարհաբարի ազգեցութեան արդիւնք:

Էջ 267, տող 15—19. Եւ իցէ՝ պ  
բժիշկ յորժամ զօրդի ուրուք բժշկիցէ, վարձս,

ոչ առնու այլ զբժշկեալն ի գլխովին զինս,  
բժշկութեանն ինդրիցէ: Ուղղելի է “վարձս ոչ  
առնուցու, այլ զբժշկեալն գլխովին ի զինս  
բժշկութեան ինդրիցէ”:

Էջ 268, տող 26 — Էջ 269, տող 5.  
Եւ կամ իցէ՞պ, որ մատուցեալ՝ զայլց զըրդիս  
կամ զծառայս յապիմակս եւ ստահակս յօ-  
ժարեցուցանիցէ հանել, եւ հասեալ ի վերայ՝  
ոչ հանիցեն զայն ընդ կառափին: Ուղղելի է “ի  
ստորհակս” . ի նախորին անկումը երկաթագիր  
գրութեան մէջ նախորդ շաղկապին և տառին  
հետ շփոթութեան պատճառաւ է:

## Զ.

### ԵԶՆԻԱՅ ԿՈՐՍՈՒՄԸ ՄԱՍՆԵՐԸ

Երբ որեւիցէ հեղինակութենէ մը մեզ  
հասած է միայն մէկ օրինակ, եւ այն մանաւանդ  
յետին դարերու գրչութեամբ, աշխատութեան  
անվթար եւ ամբողջական լինելը յամենայն  
դէպս կասկածելի կըլլայ. ասոր յայտնի օրի-  
նակներ են բուզանդ ֆաւստոսը, Ղազար ֆար-  
պեցին եւն: Քիչ թէ շատ ապահովութիւն  
ստանալու, ընթերցուածները ըստ կարելոյն  
ճիշդ ընդունելու համար՝ պէտք է ունենալ  
ամենաքիչը երկու օրինակ, տարբեր աղբիւրէ  
ծագած, որոնց փոփոխակի ընթերցուածները կամ  
իրար հաստատէին, կամ իրար լրացնէին եւ կամ  
երկուքին համեմատութեամբ նախնական ձեւը  
վերականգնուէր: Այս ընդհանուր կանոնին չէր  
կրնար բացառութիւն կազմել նաեւ Եզնից

գործը, որմէ հասած ձեռագիրը թէեւ շատիղձա-  
միտ գրչութիւն մը, բայց չունինք բնաւ ապահո-  
վութիւն թէ այդպէս ըլլային նաեւ այն նախորդ:  
օրինակները, որ նոյն գրչագրին աղբիւրն են եղած:

Նախորդ գլխին մէջ ցոյց տուինք քանի մը  
սխալներ, որոնք իրբեւ արդիւնք տառական կամ  
բառական շփոթութեանց, մտեր են Եզնից ձե-  
ռագրին մէջ: Այս գլխով ալ կ'ուզենք ցոյց  
տալ թէ Եզնից ձեռագիրն ունի նաեւ աւելի  
ծանրակշիռ թերութիւն մը, այն է քանի մը  
նշանաւոր պակաս մասեր: Այս պակասները  
կրնան նոյնպէս կամ ժամանակի ընթացքին մէջ  
թերթերու պատահական անկմամբ յառաջա-  
ցած ըլլալ եւ կամ դիտմամբ գրչագիրներու  
կողմէ յապաւուած ըլլալ: Եզնից աշխատու-  
թեան հատուածային բնաւորութիւնը քիչ մը  
արգելք կը հանդիսանայ յապաւուած կամ  
կրծատուած տեղերը լաւ նկատելու, նիւթի  
յանկարծական փոփոխութիւն մը, որ ուրիշ  
տեղ բնագրի ընդհատում պիտի համարուէր,  
կրնայ այս աշխատութեան մէջ իրը նոր գլուխ  
կամ նոր հատուած նկատուիլ. այնպէս որ իս-  
կապէս յապաւուած մասերէն ումանք կրնան  
այսպէսով քննադատութեան աչքէն փախչիլ:  
Ուստի այն պակաս կէտերը, որ այստեղ յառաջ  
կը բերենք, յամենայն դէպս պէտք է նկատել  
իրը փաքրագոյն թիւը (minimum), որոնցմէ  
աւելին դանել դիւրին, բայց հատուածային  
բնաւորութեան պատճառաւ իրը թերի հա-  
տատելը դժուար է:

ԱՀաւասիկ իմ թերի համարած մասերս.  
 1. Եղնիկ Ա. Գրքի Ը. Գլխի սկիզբը (էջ 32)  
 Հակածառելով հիւլէական վարդապետութեան  
 դէմ՝ հետեւեալ ձեւով կը փաստաբանէ. “Հար-  
 ցնենք թէ, կ'ըսէ, հիւլէն պարզ մարմին էր թէ  
 բաղադրեալ մարմին. եթէ հիւլէն պարզ մար-  
 մին էր, աշխարհը որ բաղադրեալ է՝ չէր կընար  
 անկէ ստեղծուած ըլլալ, որովհետեւ անկարելի  
 է որ բաղադրեալ մարմին մը միակ պարզ մար-  
 մինէ մը յառաջանայ. իսկ եթէ հիւլէն բաղա-  
 դրեալ մարմին էր, ուրեմն անարատ չէր եւ  
 կար ժամանակ՝ երբ հիւլէն չկար, այսինքն այն  
 ժամանակը՝ երբ դեռ զայն կազմող պարզ մար-  
 մինները միացած չէին:” Այս խելացի փաստա-  
 բանութենէն յետոյ Եղնիկ նոր խնդիր մը կը  
 հանէ. “Սյժմ ալ տեսնենք, կ'ըսէ, թէ այդ  
 հիւլէն կազմող պարզ մարմինները միմեանց  
 համաձայն էին թէ հակառակ:” Բնական է որ  
 յաջորդ տողերուն մէջ Եղնիկ նախ պիտի քննէր  
 թէ ինչ կը լինէր երբ հիւլէն կազմող պարզ  
 մարմինները համաձայն ըլլային, եւ ինչ կը  
 լինէր՝ եթէ հակառակ ըլլային. որով պիտի  
 եղակացնէր թէ հիւլէն ալ պէտք ունէր աս-  
 տուածային իմաստութեան, որ գար եւ անոր  
 կազմիչ անմիաբան տարրերուն մէջ համերաշ-  
 խութիւն մոցնէր: Բայց շարունակութեան մէջ  
 այսպիսի խօսքեր չկան. մէկ երկու յառաջաբա-  
 նական խօսքերէ յետոյ՝ Եղնիկ բոլորովին կը  
 թողու իւր բարձրացուցած խնդիրը, եւ յան-  
 կարծ կ'սկսի թ. Գլուխը՝ ըսելով. “Եւ արդ

զհիւղեայն խնդիր թողեալ՝ զօր նիւթն ամենայնի  
 կոչեն, ի չարեացն խնդիր եկեսցուք ։ Պարզ  
 է որ արտագրողը ձանձրանալով հիւլէի մասին  
 եղած այդ հակածառութիւններէն, նախորդները  
 բաւական համարելով՝ մնացեալ բոլորը թողեր  
 եւ ուղղակի անցեր է նոր գլխի:

2. Ա. Գրքի Ի գլխով (էջ 79—82)  
 Եղնիկ կը ցուցնէ այն պատճառները, որոնց հա-  
 մար տարաժամ մահը մտաւ աշխարհ. այս  
 պատճառները պարզելէ ետքը՝ կ'անցնի համա-  
 ռութիւնը: Ասկէ ալ անմիջապէս ետք կը սկսի  
 րութիւնը: Ասկէ ալ անմիջապէս ետք կը սկսի  
 րութիւնը՝ հետեւեալ բառերով. “Այս ասա-  
 ւն գլուխը՝ հետեւեալ բառերով. “Այս ասա-  
 ցաւ վասն հարցանելոյ ոմանց, թէ մեղաւորք  
 վասն մեղաց տանչիցին ի դիւացն, տղայոցն ան-  
 մեղաց ընդէր տիրիցեն դեւքն:” Կը նշանակէ  
 թէ Իս գլուխը սկսելէ առաջ քննած վերջա-  
 ցուցած պիտի ըլլար Եղնիկ ոմանց այն հար-  
 ցումը թէ ինչո՞ւ անմեղ տղաներն ալ դիւահա-  
 րութեամբ կը պատժուին. բայց իրաք այս մասին  
 խօսք մ'ալ չկայ. Եղնիկ այս խնդիրը կը քննէ  
 բաւական ընդարձակօրէն Իս գլխով՝ Ճիշտ այդ  
 խօսքերէն յետոյ՝ էջ 82—84: Երբ 84 էջի  
 23 տողով այս խնդիրը կը վերշանայ, Եղնիկ  
 յանկարծակի կ'անցնի նոր նիւթի մը. “Այս զի  
 դեւ զգեւ ոչ հանէ, զայն իսկ յայտ արար ։ Պարզ  
 Պարզ կը տեսնուի որ այստեղ խանգարում  
 կայ. նախ պէտք էր որ էջ 82 Իս գլխին սկիզբը  
 դրուած տողերը՝ “Այս ասացաւ վասն հարցա-  
 դրուած տողերը՝

ՆԵԼՍՅ ՈՄԱՆՑ . . . . գրուէին 84 էջի 23<sup>րդ</sup> տողէն յետոյ. երկրորդ՝ այս տողէն յետոյ եկած մասը՝ “ԱՅԼ զի դեւ զդեւ ոչ հանէն, պէտք էր համարել նոր գլուխ, թերեւս սկսած յառաջաբանական քանի մը տողերով, որոնք կորսուած են. (հմատ, ասոր ճիշտ դիմացը, էջ 85՝ ԻԲ գլխին յառաջաբանը). “ԱՅԼ կախարդը, ասեն, յշեն դեւս եւ հանեն զդեւսն). երրորդ ԻԱ գլխին սկիզբը գրուած յառաջաբանը հանելէ վերջ՝ պէտք էր կերպով մը երկու մասերը միմեանց կապել. այդ կապն ալ կորսուած է:

Յ. ԻԲ գլխով Եղնիկ կը քննէ նախ թէ կախարդներ չեն կարող դեւ հանել. երկրորդ՝ դեւերը առանց աստուածային թօլուութեան իրաւունք չունին մարդու մէջ մտնելու. եւ երրորդ՝ սատանան եւ գաղանները առաջ երբ մարդիկ մեղանչած չէին, չէին համարձակեր վնասել մարդոն: Այս խնդիրներէն յետոյ՝ բոլորովին անկապ կերպով կը սկսի ԻԳ. Գլուխը, ուր կը քննէ թէ հրեշտակները, դեւերը եւ մարդկանց հոգիները անմարմին են, թէ բոլոր կարծեցեալ ոգիները (ուրուական եւն) ցնորական երեւոյթներ են են. այս քննութիւնները մինչեւ Յ. գըքի վերջը կանոնաւոր եւ կապակցեալ կերպով կ'երթան, որմէ յետոյ կը սկսի Պարսից քէշին հերքումը: Կը թուի թէ ԻԳ գլխէն անմիջապէս առաջ պակաս կայ. այս պակասը կը շեշտուի թերեւս նաեւ անով որ քանի մը թուղթ յետոյ (էջ 96) կ'ըսուի. “Այս ամենայն ասացաւ, զի ցուցցի թէ որ ինչ երեւի՝ մարմնաւոր

է, եւ որ ինչ ոչ երեւի՝ անմարմին. եւ ի մարմնաւորացն են որ թանձրամարմինք են, եւ են որ անօսր մարմինք. . . Եւ միանգամայն իսկ ասացեալ թէ որ ինչ ի զգայնոց շօշափի կամ զնի կամ ազդի՝ այն մարմնաւոր է, եւ որ զգայնոց ոչ ազդի՝ անմարմին: Եզնիկ այս խօսքերով թերեւս կու տայ նախորդ գլուխներու նիւթը, այսինքն մարմնաւոր եւ անմարմին (ուրիշ խօսքով երեւելի եւ աներեւոյթ) էակներու, թանձրամարմին եւ անօսրամարմին մարմնաւորներու, ինչպէս եւ զգալի եւ անզգալի (իմաց շօշափելի եւ անշօշափելի) մարմիններու տարբերութիւնը, որոնք այժմ չկան. այս մասերը կրնանք ԻԳ գլխէն առաջ կորսուած մասին տեղ գնել:

4. Սկսեալ 113 երեսէն մինչեւ 149. Եզնիկ կը կազմէ շարունակեալ եւ խիստ կապակցեալ ամբողջութիւն մը, ուր զօրաւոր եւ միեւնշն ժամանակ հեգնական ձեւերով կը ջրէ մազգեզական վարդապետութիւնը. ամբողջը կը կայանայ Զըռուանի, Որմիզդի եւ Սիրիմանի վըայ. եւ գրեթէ չկայ երես՝ ուր ասոնցմէ մէկին կամ միւսին անունը չկրկնուի. բայց էջ 149, ԺԲ գլխով ամէն բան յանկարծ կը փոխուի. այս երեք անունները այնուհետեւ իսպառ կ'անհետանան. բարի եւ չար աստուածներու մասին ոչ մի խօսք. նոր ԺԲ գլուխը կ'սկսի բացարձակապէս անկապ ձեւով մը. “իսկ այլք այլազգ կարծեցին զատանայէ, թէ Աստուած իսկ զնաչար արար”: Այնուհետեւ կը քննուի սատանային բնականէն չար ստեղծուած թէ կամովին

չար դարձած լինելու խնդիրը, ճակատագիր, կենդանակերպներու ազդեցութիւնը, աստուածային կանխագիտութիւնը, բնազդներու, երազներու, քանի մը հիւանդութեանց մեկնութիւնը, վերջապէս դարձեալ երկնային լուսաւորներու մասին, որ երկրորդ գիրքը անմիջապէս կը կապէ երրորդ գրքին հետ: Էջ 149, ԺԲ գլուխն առաջ մեծ պակաս մը ակներեւ եւ անուրանալի է: Հետաքրքրական է նաեւ նկատել թէ այս խնդիրները կը վերաբերին աւելի առաջին գրքին եւ յատկապէս կրնան կապուիլ էջ 90 դրուած գլուխն. Էջ 173 յայտնապէս կը խօսուի անձնաշխանութեան մասին, որ ինչպէս յայտնի է Ա. գրքին նիւթն է:

5. Էջ 180, վերջին տողէն սկսեալ (Եւ փորձել այնչափ իշխակ) մինչեւ էջ 185, տող 13 (նորա ոչ ինչ գոյ յայնմ շնորհ) կը քննուի թէ սատանան այնչափ միայն իրաւունք ունի փորձելու, որչափ հրաման է ստացած, սուտ է ոմանց ըսելը թէ սատանան բնաւ չի փորձեր մարդը եւն: Այս բոլորը կը կազմէ անկախ մաս մը, որուն հետ կապ չունին ոչ իրմէ առաջ եւ ոչ իրմէ ետք դրուած մասերը. իրմէ առաջ դրուած մասերը կը խօսին քանի մը դիւական հիւանդութեանց, ամենէն վերջը լուսնոտութեան վրայ, իսկ իրմէ ետքի մասերը կը խօսին լուսաւորներու վրայ: Եթէ երկուքին մէջտեղէն յիշեալ մասը կրծատուի, իմաստի կապակցութեան մէջ խաթարում առաջ չի դար, այլ ընդհակառակն աւելի կը կապուի: Ըստ իս այս

մասը առաջին գրքին վերաբերեալ կտոր մըն է, յատկապէս 87—90 էջերուն կողմերէն:

6. Երրորդ գրքին մէջ Եղնիկ այլեւայլ յոյն հեթանոս փիլխոսիաներու վրայ խօսելէ յետոյ, էջ 241 կուկի Պղատոնի մասին՝ այս բառերով. “Եւ մանաւանդ որ քան զամենեսինն իմաստնագոյն համարին զՊղատոնն, որ վասն Աստուծոյ եւ վասն ոգւոց եւ վասն արարածոց խօսել յօժարեցաւ: Այնուհետեւ Եղնիկ կը խօստանայ զօրաւոր խօսերով կոռուիլ անոր հետ, ջախչախնել անոր վայելած պատիւը եւ յետոյ ցոյց տալ թէ ովլ է Աստուած եւ որոնք են անոր արարածները: Ահա իւր բառերը. “Եւ արդ ընդ նմա իսկ մարտիցուք գոռութեան բանիւր, որ քան զամենայն փիլխոսիայն աստուածապատագոյն երեւի Յունաց: … Զե յորժամ զնոսա մեծարոյ կարիսն զձձեսցուք, եւ հանցուք զնա յաշաց իւրոցն խաբեցելոց, ապա ցուցցուք թէ ովլ Աստուած է, եւ զինչ նորա արարածք:” Այս մեծադլորդ յայտարարութենէն յետոյ, որ ամբողջ գիրք մը ենթադրել կուտայ Պղատոնի գէմ, ինչ կը գտնենք. վեց տող միայն, ահա այն. “Եւ մի ինչ, զոր վեց տող միայն, ահա այն. “Եւ առ ինչ, զոր միշտ էր Աստուած, եւ արարածս ինչ ոչ ունէր. զորս զկամնն սիրեմ վասն զԱստուածն ինդրելոյ, եւ զամբարտաւանութիւնն ոչ գովազն: Բոլորովին պարզ է թէ հոս ահագին թերի մաս մը ունինք, եւ ինչպէս կը կարծեմ, թերեւս ամբողջ գիրք մը, որուն միայն վերջն

տողերն են սոյն վեց տողերը։ Պղատոնի վրայ խօսուած է սոյն գրքին մէջ էջ 224—227, բայց այս մասը չի կրնար այն խոստացածին տեղը բռնել. որովհետեւ գրեթէ նշն ընդարձակութեամբ եւ երբեմն քիչ մ'ալ աւելի խօսած է Պիւթագորասի, ստոյիկեանց եւ եպիկուրեանց (220—229) մասին, որնց համար այնպիսի խոստաբանութիւն չկայ. այս մասերը (Պղատոնի մասն ալ միասին) քիչ մ'ընդարձակուած կանանաւող թուումն են այն ինդիրներուն՝ որոնք մէջ բերուած են երես 204—205 (այն է ամբողջ Դ. գլուխը): Ասկէ զատ սա ալ կրնանք ի նկատի ունենալ որ Պղատոնի այդ մասը խօսուածն բաւական առաջ է տրուած եւ չի կրնար ալ տեղափոխուիլ խօսուածին տակ, որովհետեւ այսպէսով իր գտնուած տեղին ամբողջութիւնը կը խանդարուի: Պղատոնի գրքին կորուսոր մէծ է եւ ցաւալի ոչ միայն հայ մատենագրութեան համար, այլ եւ բուն յօյն գրականութեան, մանաւանդ ընդհանուր փիլիսոփայութեան պատմութեան համար:

7. Կը մնայ վերջին անգամ շեշտել 279 եւ 289 երեսներուն խոշոր զանազանութիւնը, որու մասին տես վերը Ա. գլուխ, էջերու համեմատական ցուցակին մէջ, եւ որ կամ թերութիւն եւ կամ առնուազն տեղափոխութիւն կ'ենթագրէ Եղնկայ բնագրին մէջ։

### Ց Ա Ն Կ

	Էջ
Յառաջաբան . . . . .	ե
Ա. Զեռագրին Նկարագրութիւնը . . . . .	1
Բ. Հանդամանք համեմատութեամբ ձեռագրին ընդապագրին . . . . .	19
Գ. Զեռագրական տարբերութիւնը . . . . .	23
Դ. Քննութիւն յիշեալ համեմատութեանց . . . . .	70
Ե. Զեռագրական սըրագրութիւններ Եղնկայ մէջ . . . . .	83
Զ. Եղնկայ կորուսոր մասերը . . . . .	96



## ԱԶԴԱՅԻՆ ՄԱՍԵՆՑԻԱՐԵՆ

- Ա. Գալէմքեարեան Հ. Գրիգորիս Ա., Ուսումնասիրութիւնը Լեհանայց դատաստանազրյուն: 1. Պիշտք, Լեհանայց հին իրաւունքը: 2. Խոչէր իրաւունք Հայոց: 1890: 8<sup>o</sup> Երես՝ 85+59: Փր. 1.25
- Բ. Մէկէվիշեան Հ. Գարիկին, Ազգաբանութիւն ազնուական զարմին Տիգեամց. (պատկերազարդ:) 1890: 8<sup>o</sup> Երես՝ 50: Փր. 1.—
- Գ. Տաշեան Հ. Տակովրոս, Ազգամնգեղոս առ Գէորգայ ասորի եպիկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ազգամնգեղեայ զրոց: 1891: 8<sup>o</sup> Երես՝ Ժ+159: Փր. 1.25
- Դ. Դեմիտրիս Տանի Արեւելեան Հայք ի Պուրովինա: Թրզմ. Հ. Գ. Ա., Գալէմքեարեան: 1891: 8<sup>o</sup> Երես՝ 79: Փր. —.85
- Ե. Տաշեան Հ. Տակովրոս Ա., Ուսումնասիրութիւնը Ստոխ-Կալիստենեայ Վարուց Աղեքսանդրի: 1892: 8<sup>o</sup> Երես՝ Դ+272: Փր. 3.—
- Զ. Ալպէր Տըլլի եւ Գ. Փիտոն, Ուղևորութիւն ի Փոքր Ասիա: Թրզմ. Հ. Յ. Վ. Ա., Տաշեան: 1892: 8<sup>o</sup> Երես՝ 82: Փր. 1.—
- Է. Մատ Նիկ., Ամառնային ուղեւորութիւնից դէպ ի Հայ: Թրզմ. Մոփրիս Անոփեան: 1892: 8<sup>o</sup> Երես՝ 89: Փր. 1.25
- Ը. Գարիկին Ա., Նորագյուն աղքերը Մովսիս Խորենացի: Հայոց: Թրզմ. Ա. Ա. Ա., Տաշեան: 1893: 8<sup>o</sup> Երես՝ Ժ+51: Փր. 1

- Թ. Գալէմքեարեան Հ. Գրիգորիս Ա., Պատմութիւն հայ լրագրութեան: Հտր. Ա. 1794—1860: (1 լրասանկարով:) 1893: 8<sup>o</sup> Երես՝ 232: Փր. 2.50
- Ժ. Կոմիրին Փր. Կ., Քննութիւնը զրոց Դաւթի Անաղթի: Թրզմ. Ա. Յաւ. Հ. Յ. Վ. Ա., Տաշեան: 1893: 8<sup>o</sup> Երես՝ Է+92: Փր. 1.25
- ԺԱ. Գովորիկեան Հ. Գրիգոր Ա., Հայք յԵղիսաբեթուալիս Դրանսիրուանիոյ 1680—1779: (1 զընկատիվ.) 1893: 8<sup>o</sup> Երես՝ Ժ+533: Փր. 4.50
- ԺԲ. Խաչաթեան Գ. Ա., Զենոպ Գևակ, Տամնատական ուսումնասիրութիւն: 1893: 8<sup>o</sup> Երես՝ 78: Փր. 1.—
- ԺԳ. Տէր-Մովսիսինան Փարսադան, Հայք յիղաւական տունը: Թրզմ. Հ. Յ. Վ. Ա., Պիլէղիկեան: (6 տախտակ՝ 55 պատկ.) 1894: 8<sup>o</sup> Երես՝ 103: Փր. 2.—
- ԺԴ. Գարիկին Ա., Նորագյուն աղքերը Մովսիսի Խորենացի: Հայոց: Թրզմ. Բ. Կամ Յաւելուած: Թրզմ. Հ. Յ. Վ. Ա., Տաշեան: 1894: 8<sup>o</sup> Երես՝ ԺԱ+43: Փր. 1.—
- ԺԵ. Տաշեան Հ. Յ. Վ. Ա., Ուսումնասիրութիւնը հայերէն փոխանակ բառից: Ա. Հ. Հիւաշման, Սեմական փոխանակ բառեր հին հայերէնի մէջ: Բ.՝ Փորէւման Կ., Յուսական փոխանակ բառեր հայերէնի մէջ: Գ.՝ Հ. Հիւաշման, Հայկական Յատունը: 1894: 8<sup>o</sup> Երես՝ Գ+145: Փր. 2.—
- ԺԶ. Տաշեան Հ. Յ. Վ. Ա., Մատենագրական մանր ուսումնասիրութիւնը: Հտր. Ա. Ա—Զ: Ա. Նեմինը Բ. Պրոկող Դիալոգիս: Գ. Խոպովիկ: Դ. Գիրը Հերձուածոց կամ Եպիփան: Ե. Պրոկող: Զ. Սկուլը: 1895: 8<sup>o</sup> Երես՝ ԺԲ+294: Սկուլընը իմաստաէր: Փր. 3.60
- ԺԷ. Տաշեան Հ. Յ. Վ. Ա., Հայկական աշխատական սիրութիւնը հայագէտ Պ. Ֆէթթէքի, և մի ամփոփուած եւ թարգմանուած հանդերձ ծանօթութեամբը: 1895: 8<sup>o</sup> Երես՝ 202: Փր. 2.50
- ԺԸ. Տիկրեան Կ., Սեւ ծովու ուսական եզնըը: 1895: 8<sup>o</sup> Երես՝ 192: Փր. 2.—
- ԺԹ. Գովորիկեան Հ. Գրիգոր Ա., Դամսիրուանիոյ Հայոց Մետրապոլիսը կամ Նկարազիք Կերւա

- Հայաբանագի ի զիր եւ ի պատկերս: 1896: 8<sup>o</sup>  
Երես՝ թ+352: Փր. 3.60
- Ի. Տաշեամ Հ. Յակովյան Ա., «Վարդապետութիւն առաքելոց, անվաւերական կանոնաց մատեանը. Թուղթ Յակոբայ առ Կողբատու եւ Կամոնք Թագդէի: 1896: 8<sup>o</sup> Երես՝ թ+442: Փր. 6.—
- ԽԱ. Տումաշէկ Վ., Սատուն եւ Տիգրիսի աղքերաց սահմանները: Պատմական եւ տեղագրական հետազոտութիւն: Մասն Առաջին՝ Պատմական տեղեկութիւնը Սամոյ վրայ: Թրգմ. Հ. Բ. Պիլէզիկ-ծեան: 1896: 8<sup>o</sup> Երես՝ լ+62: Փր. 1.—
- ԻԲ. Կարիկէր Ա., Արգարու զրոյցը Մովսէս Խորենացու Պատմութեան մէջ: Թրգմ. Հ. Դաբրիէլ Վ. Մէսէվիշեան: 1897. 8<sup>o</sup> էջ ժ+107: Փր. 1.50
- ԻԳ. Յովանանեամ Հ. Դ., Հետազոտութիւնը Նախնեաց ու ամկօքէնի վրայ: Ուսումնասիրութիւնը եւ քաղուածներ: Մասն Ա. Ռամկօքէն մատենագրութիւնը: Տետր Ա: 1897, 8<sup>o</sup> էջ լ+272: Փր. 4.—
- ԻԴ. Յովանանեամ Հ. Դ., Հետազոտութիւնը Նախնեաց ու ամկօքէնի վրայ: Ուսումնասիրութիւնը եւ քաղուածներ: Մասն Ա. Ռամկօքէն մատենագրութիւնը: Տետր Ա: 1897. 8<sup>o</sup> էջ լ+273—522: Փր. 3.—
- ԻԵ. Գևորգէր Հ., Համասու պատմութիւն Հայոց: Թրգմ. Հ. Գր. Վ. Գևորգէրեան: Յաւելուածք Թարգմանչն 1. Յանկ 1895—1897 Հայոց կոտորածներու առթիւ լոյս տեսած գրքերու: 2. Գաւազանագիր Կաթողիկոսաց եւ Պատրիարքաց Հայոց: 1897 8<sup>o</sup> էջ լ+130: Փր. 1.50
- ԻԶ. Մէկնէլիշնեամ Հ. Գարիկիէլ Վ., Գիրք (կամ յօդուած) գրելու արուեստը: Նորուս ճեղմաներուն ուղղեալ քանի մը կարեւոր ակնարկութիւններ: Յաւելուածք Գիրք կարդալու արուեստը: 1898: 8<sup>o</sup> էջ լ+123: Փր. 1.25
- ԻԷ. Խաչաթէնամ Գ. Իր., Մ. Խորենացու նորագոյն աղքերների մասին բնագատական ուսումնասիրութիւնը: 1898: 8<sup>o</sup>, 56 էջ: Փր. 1.—
- ԻԸ. Տաշեամ Հ. Յ., Ակնարի մը հայ նապութեան վրայ: Ուսումնասիրութիւն Հայոց գոշու-

- Թեան արուեստին: (10 զնկատիպ պատկերով:) 1898: 8<sup>o</sup> ժԱ+202 էջ: Փր. 2.50
- ԻԹ. Դաղիքաշեամ Յ., Փաւատու Բիւզանդացի եւ իւր պատմութեան խարդախովը: Մ. Խորենացու աղքերների ուսումնասիրութիւն: 1898, 8<sup>o</sup> 175 էջ: Փր. 2.50
- Լ. Մակերեւաց Լ., Հայերէն բարքառախօսութիւն: Թրգմ. ի ուսւերէնէ Հ. Գ. Վ. Մէնէվիշեան: 1899, 8<sup>o</sup> Երես՝ լ+26: Փր. —.50
- ԼԱ. Քուեամ Հ. Յ., Հայր ի Զմիւնիա եւ ի շրջակայս: Հատոր Ա. Զմիւնիա եւ Հայր. (պատկերազարդ:) 1899: 8<sup>o</sup> Երես՝ ժԲ+369: Փր. 5.—
- ԼԲ. Քուեամ Հ. Յ., Հայր ի Զմիւնիա եւ ի շրջակայս: Հատոր Բ. Զմիւնիոյ վիճակին զենաւոր քաղաքներն եւ Հայր. (պատկերազարդ:) 1899: 8<sup>o</sup> Երես՝ ժԲ+161: Փր. 2.50
- ԼԳ. Գովրիկէնամ Հ. Իրիգոր Վ., Հայր յԵղիսաբեթուղիմի Դրամսիլուսնիոյ. Բ. Հատոր 1780—1825. (1 զնկատիպ:) 1899: 8<sup>o</sup>. Երես՝ լ+558: Փր. 5.—
- ԼԴ. Գագամձեամ Յ. Յ., Եւլոկիոյ Հայոց գաւառաբարբառը: 1899: 8<sup>o</sup> Երես՝ լ+124: Փր. 1.—
- ԼԵ. Վարդիկէր Ա., Հեթանոս Հայաստանի ութ մէնեաններն Ազաթանգեղոսի եւ Մ. Խորենացու համատ: Թրգմ. Հ. Յակովը Վ. Տաշեան: (1 աշխարհգրելու տախտակով:) 1899: 8<sup>o</sup> Երես՝ 48: Փր. —.70
- ԼԶ. Տաշեամ Հ. Յ., Ժողովածոյ առակաց Վարդանայ, ոսուն Ն. Մափ, տեղեկատութիւն եւ քաղուածքներ: 1900: 8<sup>o</sup> Երես՝ ժԱ+198: Փր. 2.50
- ԼԸ. Տաշեամ Հ. Յ., Մատենագրական Մանր Ուսումնասիրութիւնը. (տես ժԳ:.) Մասն Բ: լ-Փ. Խիկար եւ իւր իմաստութիւնն, Ազագետու եւ իւր Ցորդականը առ Ցուտինիանու, Թղթակցութիւն Ազգարու եւ Քրիստոփ ըստ նորագիտ արձանագրութեան Եփեսով, եւ Գէորգայ Պիսիեայ Ացցօրնայք: 1901: 8<sup>o</sup> Երես՝ ժԲ+388: Փր. 4.50
- ԼԾ. Գ. Ի. Տէր-Պողոս Եւամ Նկատուղութիւններ Փաւատու պատմութեան վերաբերեալ: 1901: 8<sup>o</sup> Երես՝ լ+110: Փր. 1.50

ՀԹ. Աէրէր Դր. Սիմոն, Արարատը Ս. Գրոց մէջ:  
Թրգմ. Հ. Բակոնաբաս Վ. Պիլէզիկօնեան: 1901: 8°  
Երես՝ Ե+77: Փր. 1.—

Խ. Սահմանադնան Յովսէի Վ., Ասորեսուանեայ  
եւ Պարսիկ սեպագիր արծանազրութիւնը կամ  
Նոցինքաղուածը որոնք Նախի-Ռարատու աշխար-  
հին պատմութեան կը վերաբերին: 1901: 8°  
Երես՝ 262: Փր. 4.50

ԽԱ. Խաչաթեած Բագրատ, Հայ Ժողովրդական  
դիւցազնական վէպը: 1903: 8° Երես՝ Ը+72: Փր. 1.—

ԽԹ. Մէնէվիչեամ Հ. Գարբիկէ Վ., Արդի Մարտա-  
գիտութիւնը: Հատոր Ա.: 1903: 8° Երես՝ Ը+204:  
Փր. 3.—

ԽԳ. Մարկարտ Դր. Յ., Հայ Բղեաշխը: Թրգմ. Հ.  
Թ. Կէտիկնեան: 1903: 8° Երես՝ 44:

Փր. —.75


ԽԴ. Գէլցէր Հ., Սկզբնաւորութիւնը Բիւզանդեան բա-  
նակաթեմերու զրութեան: Թրգմ. Հ. Գ. Գարան-  
ֆիլնեան: 1903: 8° Երես՝ Է+83: Փր. 2.—

ԽԵ. Կիւշէր Եամ Բ. Վ., Ժովք, Ժովք-Տլուք եւ  
Հոռմ-Կլայ, պատմական եւ տեղագրական ուսում-  
նասիրութիւն: (1 աշխարհագրական տախտակով)  
1904, 8° Երես՝ Ը+119: Փր. 1.50

ԽԶ. Կիւշէր Եամ Բ. Վ., Կոլոտ Յովհաննէս Պատ-  
րիարք. պատմագրական եւ բանասիրական ուսու-  
մնասիրութիւն: 1904: 8° Երես՝ ԾԴ+227: Փր. 3.50

ԽԷ. Պեղերսը Հ., Նպաստ մը հայ. Մեղուք պատ-  
մութեան: Թարգմ. Հ. Գ. Գարանֆիլնեան: 1904:  
8° Երես՝ Ը+87: Փր. 1.25

ԽԸ. Տէր-Մկրտչեամ Գ. ԵԽ Աճառեամ Հ. Յ.,  
Քննութիւն եւ համեմատութիւն Եզնկայ նորագիւտ  
ձեռագրին: 1904: 8° Երես՝ Ը+110: Փր. 1.50



ՀՀ Ազգային գրադարան



NL0143542

17126